ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆԻ ԵՎ ՀՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ (1791—1792 թթ.)

1990 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայ-ավստրիական ընկերության հրավերով գտնվելով Վիեննայում և ապրելով Մխիթարյան միաբանության վանքում, հնարավորություն ունեցա տեսականորեն աշխատելու միաբանության մատենադարանում և արխիվում։ Ի թիվս այլ արժեքավոր ձեռագիր նյութերի, իմ ուշադրությունը գրավեցին մատենադարանի 694-րդ համարի տակ պահվող չորս տասնյակ փաստաթղթերը, որոնք գլխավորապես հայ կաթողիկոսների և պատրիարքների կոնդակներ էին։ Դրանց մեջ էին նաև XVIII դարի երկրորդ կեսի հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչներ Հովսեփ էմինի և ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի նամակները, որոնք մինչև հիմա ոչ միայն մնացել են անտիպ, այլև վրիպել են հայ ազատագրական շարժման պատմությունն ուսումնասիրող գիտնականների ուշադրությունից՝ չնայած դեռևս 1963 թ. 694 ձեռագրահամարի տակ պահվող բոլոր փաստաթղթերի հակիրճ նկարագրությունը հրապարակվել է Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրացուցակում[1]։

Էմինը գրել է մի շարք հայերեն նամակներ, որոնցից մի քանիսը նա թարգմանել է անգլերեն և զետեղել իր ինքնակենսագրության մեջ։ Դրանցից ոչ մեկի բնագիրն առայժմ չի գտնված։ Նրա գրքի թարգմանության ժամանակ, բնականաբար, հայերեն են թարգմանվել նաև այդ նամակները (օրինակ՝ Լոնդոնից նրա նամակներն ուղարկված իր հորը՝ Հովսեփին և Հերակլ II վրաց թագավորին)[2]։

Ստորև հրատարակվող նամակները Հովսեփ էմինի ձեռքով գրված ու մեզ հասած միակ հայերեն նամակներն են, որոնք, ցավոք, պահպանվել են ընդօրինակված ձևով։ Արտագրությունը կատարած պետք է լինի Հնդկաստան ուղարկված մխիթարյան վարդապետներից որևէ մեկը, որը հետո դրանք ուղարկել կամ բերել է Վիեննա։ Նրա ձեռքի տակ եղել են էմինի նամակների սեպագրությունները և Հ. Արղությանի նամակի բնագիրը։

Նամակները գրվել են 1791—1792 թթ.։ Հ. Արղությանը գրել է Պետերբուրգից 1791 թ. ապրիլի 4-ին (փաստաթուղթ № 1), իսկ էմինը Կալկաթայից պատասխանել է նրան 1792 թ. հունվարի 1-ին (№ 2)։ Մի քանի օր դրանից առաջ՝ 1791 թ. դեկտեմբերի 24-ին նա նամակ էր գրել Հովհաննես Լազարյանին և հունվարի 1-ին լրացրել այն մի փոքրիկ հետգրությամբ (№ 3)։

Հ. էմինի և Հ. Արղությանի միջև գրագրության մասին տեղյակ է եղել «Դիվան հայոց պատմության» ժողովածուների հրատարակող Գյուտ քահանա Աղանյանցը։ Նա տպագրել է Հ. Արղությանի 1 ապրիլի 1791 թվակիր հետևյալ տողերը. «էմին աղայն մեզ թղթեր էր գրեալ, պատասխան նորին ևս գրեցաք ընդ սոյն թղթոյս»[3]։

Ակադ. Արգար Հովհաննիսյանը, հանգամանորեն ուսումնասիրելով Հ. էմինի կյանքն ու գործունեությունը, ուշադրություն է դարձրել այդ տեղեկությանը, լրացնելով այն այլ նյութերով։ Նրան ևս հայտնի է, որ այդ թվականներին նամակագրություն է եղել էմինի հետ և ռուսական իշխանությունների առաջարկությամբ վերջինս հրավիրված է եղել Ռուսաստան՝ մասնակցելու նախապատրաստվող ռազմական արշավանքին։

Հայտնի է, որ XVIII դարի 70-ական թթ. վերջերին Պետերբուրգում ծրագրեր էին մշակվում գրավելու Անդրկովկասը և ստեղծելու Ռուսաստանից կախյալ վրացական ու հայկական պետություններ։ Իրանի դեմ նոր արշավանքի նախապատրաստության գործը հանձնարարված էր զորավար Ա. Վ. Սուվորովին։ 1780 թ. Պետերբուրգում իշխան Գ. Ա. Պոտյոմկինը և

---

1 Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարյան մատենադարանին ի Վիեննա, հատոր Բ, կազմեց Հ. Համազասպ Ոսկյան. Վիեննա, 1963, էջ 137—139։

2 Հովսեփ էմինի կյանքն ու արկածները, Հովսեփ էմինի անգլերեն բնագրեն թարգմանեց՝ Հ. Խաչատրյան. Պեյրութ, 1958, էջ 113։

3 Դիվան հայոց պատմության, գիրք Թ. Թիֆլիս, 1911, էջ 120։